



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ
СОБСТВЕННОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 3(43)

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Մ Ա Ս
ЧАСТЬ 1

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2007 թվականի սեպտեմբերի 17-ից

ՄԱՍ I

ԳՅՈՒՏԵՐ	4, 123
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	6, 125
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	21, 139
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	23, 141
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	23, 142
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....</i>	25, 144
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	37
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին</i>	39
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	110
ՑՈՒՑԻՉՆԵՐ	113
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	115
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	147

ՄԱՍ II

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ	4
<i>Տեղեկություններ 2006թ. գրանցված ֆիրմային անվանումների մասին</i>	6

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Ֆեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Չեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок
Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ЧАСТЬ 1

ИЗОБРЕТЕНИЯ.....4, 123
Сведения о выданных патентах.....6, 125

ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....21, 139
Сведения о выданных патентах.....23, 141

ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....25, 142
Сведения о выданных патентах.....27, 144

ТОВАРНЫЕ ЗНАКИ.....37
Сведения о зарегистрированных
товарных знаках и знаках обслуживания39
Сведения о продлении действия
регистрации товарных знаков.....110

УКАЗАТЕЛИ.....113

СООБЩЕНИЯ.....115

ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....147

ЧАСТЬ 2

ФИРМЕННЫЕ НАИМЕНОВАНИЯ4
Сведения о зарегистрированных заявках
фирменных наименований в 2006 г.6

CONTENTS

PART 1

INVENTIONS.....4, 123
Information on granted patents.....6, 125

UTILITY MODELS.....21, 139
Information on granted patents.....23, 141

INDUSTRIAL DESIGNS.....25, 142
Information on granted patents.....27, 144

TRADE MARKS.....37
Information on registered trade
marks and service marks39
Information on renewal of effect
of trademark registration110

INDEXES.....113

REPORTS.....115

TWO-LETTER CODES.....147

PART 2

TRADE NAMES.....4
Information on registered firm name's
applications in 2006.6

43ntstr

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11 *արտոնագրի համարը*
- 13 *փաստաթղթի տեսակի կոդը*
 - A1 *Գյուտի հիմնական արտոնագիր*
 - A2 *Գյուտի նախնական արտոնագիր*
 - B2 *Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր*
- 21 *հայտի համարը*
- 22 *հայտի ներկայացման թվականը*
- 23 *լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն*
- 24 *արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը*
- 31 *առաջնային հայտի համարը*
- 32 *առաջնային հայտի ներկայացման թվականը*
- 33 *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը*
- 42 *հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը*
- 44 *գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 45 *գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51 *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄՍԴ) ցուցիչը(ները)*
- 54 *գյուտի անվանումը*
- 56 *տեղեկատվության աղբյուրներ*
- 57 *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62 *ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 65 *հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը*
- 71 *հայտատուն, երկրի կոդը*
- 72 *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73 *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74 *արտոնագրային հավատարմատար*
- 85 *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86 *միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը*
- 87 *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 1987 (13) A2
A01C 15/00

- (21) AM20060197 (22) 12.12.2006
(42) 01.02.2007
(71) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM),
Չովա Գեղամի Մարտիրոսյան (AM)
(72) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM),
Չովա Գեղամի Մարտիրոսյան (AM)
(73) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան, 0069,
Երեւան, Գոգոլի 5, բն.6 (AM), Չովա Գեղամի
Մարտիրոսյան, 0069, Երեւան, Գոգոլի 5, բն. 6 (AM)
(54) **Շաղափի մեքենայի ռոտորային աշխատանքային օրգան**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ օրգանական հանքային պարարտանյութերի եւ այլ նյութերի մակերեւութային ցրման սարքերին:

Սարքն ունի պատյանում տեղադրված եւ իր առանցքի շուրջը պտտվող կոնաձեւ կոնոն, որի վրա ամրակցված են հիմնական եւ լրացուցիչ թիակներ: Լրացուցիչ թիակները տեղակայված են հիմնական թիակների առջեւում, շառավղորեն շեղված են հիմնական թիակների նկատմամբ եւ գտնվում են պտտման առանցքից ավելի փոքր հեռավորության վրա, քան հիմնական թիակները:

Նվազեցվում են կտրման եւ քարշային դիմադրությունները, բարձրացվում են արտադրողականությունը եւ ցրման որակը, 2 նկ.:

(51) (2006) (11) 1988 (13) A2
A01G 31/00

- (21) AM20060165 (22) 03.10.2006
(42) 01.03.2007
(71) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան (AM)
(72) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան (AM),
Աննա Թադեւոսյան (AM), Ալբերտ Յովսեփյան
(AM), Խաչատուր Մայրապետյան (AM)
(73) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան,
0051, Երեւան, Մամիկոնյանց 47/1, բն.47 (AM)
(54) **Ցանովի խոտաբույսերի անհող աճեցման եղանակ եւ դրա իրականացման համակարգ**
(57) Գյուտը վերաբերում է բույսերի անհող աճեց-

մանը եւ կարող է օգտագործվել ցանովի խոտաբույսերի ջերմատնային եւ բացօթյա աճեցման համար:

Ցանովի խոտաբույսերը տնկում են պոլիէթիլենային թաղանթով հողից մեկուսացված անօրգանական սուբստրատի մեջ: Ապահովում են խոտաբույսերի սնուցիչ լուծույթի մեքենայացված կարգավորում եւ պարբերական անվերադարձ շիթային մատուցում բաշխիչ խողովակներով, որոնք ունեն գլխադիրներով անցքեր:

Ցանովի խոտաբույսերի անհող աճեցման համակարգն ունի իրար հաջորդաբար միակցված սնուցիչ լուծույթի ռեզերվուար, պոմպ, գտիչ եւ սնուցիչ լուծույթի բաղադրամասերի հարաբերակցությունը եւ թթվայնությունն ավտոմատ որոշող եւ կարգավորող սարքեր, խողովակաշար, բաշխիչ խողովակներ, որոնք տեղադրված են պոլիէթիլենային թաղանթով հողից մեկուսացված անօրգանական սուբստրատի վրա եւ ունեն գլխադիրներով անցքեր բույսի տնկարկման տեղում:

Ապահովվում է ցանքատարածության արդյունավետ օգտագործում եւ բերքատվության բարձրացում, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) (2006) (11) 1989 (13) A2
A01G 31/00

- (21) AM20060166 (22) 06.10.2006
(42) 01.03.2007
(71) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան (AM)
(72) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան (AM),
Աննա Թադեւոսյան (AM), Ալբերտ Յովսեփյան
(AM), Խաչատուր Մայրապետյան (AM)
(73) Ստեփան Խաչատուրի Մայրապետյան,
0051, Երեւան, Մամիկոնյանց 47/1, բն.47 (AM)
(54) **Խոտաբույսերի անհող աճեցման եղանակ եւ դրա իրականացման համակարգ**
(57) Գյուտը վերաբերում է բույսերի անհող աճեցմանը եւ կարող է կիրառվել միամյա եւ բազմամյա խոտաբույսերի ջերմատնային եւ բացօթյա աճեցման համար:

Խոտաբույսերը տնկում են հողում տեղադրված անօրգանական սուբստրատով ակոսներ:

րի մեջ, որոնք միջակոսային տարածքի հետ միասին հողից մեկուսացնում են պոլիէթիլենային թաղանթով: Ապահովում են խոտաբույսերի սնուցիչ լուծույթի մեքենայացված կարգավորում եւ պարբերական անվերադարձ շիթային մատուցում բաշխիչ խողովակներով, որոնք ունեն գլխադիրներով անցքեր: Միջանկյալ խողովակաշարի եւ մագնիսական փականների միջոցով ապահովում են տնկադաշտերի մի քանի միավորներից մեկի սնուցումը:

Խոտաբույսերի անհող աճեցման համակարգն ունի իրար հաջորդաբար միակցված սնուցիչ լուծույթի ռեգերվուար, պոմպ, գտիչ, սնուցիչ լուծույթի բաղադրամասերի հարաբերակցությունը եւ թթվայնությունը որոշող եւ կարգավորող սարքեր եւ խողովակաշար: Խողովակաշարին հաջորդաբար միացված են սնուցիչ լուծույթի հոսքի ուղղությունը կարգավորող մագնիսական փականներ, առնվազն երկու միջանկյալ խողովակաշար եւ բաշխիչ խողովակներ: Բաշխիչ խողովակները տեղադրված են անօրգանական սուբստրատով լցված ակոսների վրա եւ ունեն գլխադիրներով անցքեր բույսի տնկարկման տեղում:

Բարձրացվում է բերքատվությունը, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) (2006) (11) 1990 (13) A2
A01G 33/00
C12M 3/02

- (21) AM20060180 (22) 13.11.2006
- (42) 01.02.2007
- (71) Գրիգոր Մինասի Կարագյոզյան (AM)
- (72) Գրիգոր Մինասի Կարագյոզյան (AM)
- (73) Գրիգոր Մինասի Կարագյոզյան, 0061, Երեւան, Արշակունյանց պող. 48/2, քն. 34 (AM)
- (54) **Սպիրուլինայի կենսազանգվածի ստացման եղանակ**
- (57) Սպիրուլինայի կուլտուրան աճեցնում են Չառուկի սնուցիչ միջավայրում բաց առվակաձեւ ֆոտոռեակտորի մեջ մինչեւ 20 կլք արեւի լուսավորվածության եւ 32-33°C շերմաստիճանի պայմաններում: Սնուցիչ միջավայրի լուծույթի մեջ ներմուծում են ինոկուլյատ եւ ածխաթթվական գազ, ստացված կենսազանգվածը կորզում են, լվանում եւ չորացնում: Կենսազանգ-

վածի աճեցման ընթացքում սպիրուլինայի կուլտուրան ենթարկում են ակտիվացման՝ կորզելով կուլտուրայի երկար անհատները եւ վերադարձնելով կարճ անհատներն ու կտրտված երկար անհատների մասերը:

Բարձրանում է սպիրուլինայի կենսազանգվածի ելքը:

(51) (2006) (11) 1991 (13) A2
A23C 21/00

- (21) AM20070002 (22) 12.01.2007
- (42) 01.03.2007
- (71) Արմեն Եղիշեի Աղաջանյան (AM)
- (72) Արմեն Եղիշեի Աղաջանյան (AM), Յրանտ Միքաելի Ադիլխանյան (AM)
- (73) Արմեն Եղիշեի Աղաջանյան, 0051, Երեւան, Գրիբոյեդովի 3, քն. 47 (AM)
- (54) **Կաթի չոր շիճուկի ստացման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է կաթի արդյունաբերությանը եւ կարող է կիրառվել կաթի չոր շիճուկի ստացման համար:

Կաթնաշոռի կամ պանրի շիճուկը հավաքում են, պահեստավորում, pH-ի արժեքը կրակաթով հասցնում են մինչեւ 7,0, գատում են, խտացնում մինչեւ չոր նյութերի 50%-անոց պարունակությունը եւ չորացնում փոշիացմամբ:

Բարձրացվում է եղանակի տեխնոլոգիամիտությունը:

(51) (2006) (11) 1992 (13) A2
A23L 1/30

- (21) AM20060140 (22) 08.08.2006
- (42) 01.02.2007
- (71) Ռիտա Սուրենի Էմինյան (AM), Ռոզա Անուշավանի Մադոյան (AM)
- (72) Ռիտա Սուրենի Էմինյան (AM), Ռոզա Անուշավանի Մադոյան (AM)
- (73) Ռիտա Սուրենի Էմինյան, 0033, Երեւան, Սիամանթոյի 4, քն.9 (AM), Ռոզա Անուշավանի Մադոյան, 0012, Երեւան, Վաղարշյան 20/1, քն. 40 (AM)
- (54) **Կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումի ստացման եղանակ**
- (57) Կենսաբանորեն ակտիվ սննդային հավել-

լումը ստանում են խառնելով *Lactobacterium acidophilum* տեսակի մանրէներ ներառող չոր բակտերիալ պատրաստուկ եւ հանքային ջրերից ստացված հանքային աղերի չոր մնացորդ: Բակտերիալ պատրաստուկը եւ հանքային աղերի չոր մնացորդը խառնում են զանգվածային 1,0:(1,5-2,5) հարաբերակցությամբ: Հանքային աղերի ստացման համար օգտագործում են «Ջերմուկ» կամ «Լոռի», կամ «Արզնի», կամ «Բջնի», կամ «Դիլիջան» հանքային ջրերը:

Երկարացվում է սննդային հավելումի պահպանման ժամկետը:

(51) (2006) (11) 1993 (13) A2
A41B 9/00

(21) AM20060203 (22) 21.12.2006
(42) 01.03.2007

(71) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)
(72) Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)
(73) Ալեքսան Մկրտչի Արզումանյան, 3201, Գյումրի, Սեւյան 47, բն. 5 (AM)

(54) «Ստրինգ» տեսակի ներքնազգեստ

(57) Ներքնազգեստն ունի եռանկյունաձև առջևի մաս, որը կապիչներով միակցվում է կենդանի ունեցող հետեւի միակցիչ մասին: Առջևի մասը կազմված է առանձին աղեղաձև թիթեղներից, որոնց կողային կողմերում կան միջանցիկ անցքեր: Կապիչի ազատ ծայրերը հաջորդաբար անցկացվում են թիթեղների եւ հետեւի միակցիչ մասի անցքերի միջով, իսկ օղակաձև հատվածը կառչում է հետեւի մասի կենդանի: Թիթեղների անցքերը կարող են լինել երկայնական կամ լայնական:

Ապահովվում է արագ փոխարինման եւ տարբեր չափսերի համար կիրառման հնարավորությունը, 14 նկ.:

(51) (2006) (11) 1994 (13) A2
A61B 5/00
G01K 7/00

(21) AM20060192 (22) 06.12.2006
(42) 01.02.2007

(71) Սամվել Գուրգենի Նալբանդյան (AM), Աննա Հարությունի Մարտիրոսյան (AM)

(72) Սամվել Գուրգենի Նալբանդյան (AM), Աննա Հարությունի Մարտիրոսյան (AM)

(73) Սամվել Գուրգենի Նալբանդյան, 0025, Երեւան, Ավան, Չարենցի հատված 17, բն.26 (AM), Աննա Հարությունի Մարտիրոսյան, 0020, Երեւան, Դաշտենցի 6 (AM)

(54) Բազմաֆունկցիոնալ բուժախտորոշիչ համակարգ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ ռադիոչերմաչափական համակարգերին եւ կարող է օգտագործվել տարբեր հիվանդությունների ախտորոշման եւ բուժման համար:

Բազմաֆունկցիոնալ բուժախտորոշիչ համակարգն ունի անտենա, մոդուլարար, շրջապատիչ, մոդուլման ռադիոմետր, հեռանիշային լարման գեներատոր, միմյանց հաջորդաբար միացված գերբարձր հաճախության (ԳԲՀ) ուժեղարար, ամպլիտուդային դետեկտոր, ցածր հաճախության ուժեղարար, բազմապատկիչ, ինտեգրատոր եւ հաստատուն հոսանքի ուժեղարար, որի ելքը միացված է համակարգչին: Համակարգն ունի նաեւ միմյանց նկատմամբ շերմային փոխադարձ հպման հնարավորությամբ տեղակայված ռեզիստոր եւ շերմաստիճանի տվիչ, որին միացված է շերմաստիճանի ցուցանշման սարք: Անտենան միացված է շրջապատիչ առաջին բազուկին, որի երկրորդ բազուկը միացված է ԳԲՀ ուժեղարարին: Մոդուլարարի կառավարման մուտքը միացված է հեռանիշային լարման գեներատորին, որը միացված է նաեւ բազմապատկչին: Ռեզիստորը միացված է մոդուլման ռադիոմետրին եւ շրջապատիչ երրորդ բազուկին: Հեռանիշային լարման գեներատորի ելքին միացված են ԳԲՀ լայնաշերտ գեներատորը եւ բազմալիք ենթակարմիր տվիչը, որը միացված է նաեւ շերմաստիճանի ցուցանշման սարքին: Լայնաշերտ ԳԲՀ գեներատորը միացված է անտենային եւ մոդուլարարին:

Ընդլայնվում են համակարգի ֆունկցիոնալ հնարավորությունները, 18 նկ.:

(51) (2006) (11) 1995 (13) A2
A61B 17/00

(21) AM20060212 (22) 28.12.2006
(42) 02.04.2007

- (71) Վարդան Լեւոնի Բակալյան (AM)
- (72) Վարդան Լեւոնի Բակալյան (AM)
- (73) Վարդան Լեւոնի Բակալյան, Երեւան, Կորյունի 23/37, բն. 3 (AM)

(54) Գերաճած փափուկ հյուսվածքի հեռադիր թեւանման հատման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է ստոմատոլոգիային, մասնավորապես՝ պարօդոնտալ վիրաբուժությանը:

Հեռադիր ատամի անդաստակային եւ բերանային կողմերից կատարում են ուղղահայաց կտրվածքներ, ստանում են թեւանման լաթեր եւ լրացուցիչ կատարում հորիզոնական կտրվածք՝ ուղղահայաց կտրվածքները ատամնաբնային ելունի հիմքի շրջանում միացնելու համար: Այնուհետեւ հեռացնում են գերաճած փափուկ հյուսվածքը եւ կարում:

Նվազեցվում է եղանակի վնասվածությունը, 1 նկ.:

(51) **(2006)** (11) **1996** (13) **A2**
A61C 3/00

(21) AM20060211 (22) 28.12.2006
(42) 02.04.2007

- (71) Վարդան Լեւոնի Բակալյան (AM)
- (72) Վարդան Լեւոնի Բակալյան (AM)
- (73) Վարդան Լեւոնի Բակալյան, 0007, Երեւան, Կորյունի 23/37, բն. 3 (AM)

(54) Ոսկրաքերիչ

(57) Գյուտը վերաբերում է բժշկական գործիքներին եւ կարող է կիրառվել հյուսվածքների շերտազատման համար:

Ոսկրաքերիչն ունի բռնակ, դրա երկու ծայրերին՝ միջանկյալ մաս եւ կորացած ծայրով աշխատող մաս, ընդ որում աշխատող մասերն ուղղված են դեպի ներս եւ բռնակի նկատմամբ հակադիր են: Բռնակի եւ աշխատող մասերի աշխատանքային մակերեսային միջեւ անկյունները կազմում են 35-60°:

Ապահովվում է փափուկ հյուսվածքի շերտազատման հնարավորությունը քմային կողմից եւ ատամնաբնային ելունի հիմքից, 1 նկ.:

(51) **(2006)** (11) **1997** (13) **A2**
A61C 8/00

(21) AM20060188 (22) 30.11.2006
(42) 02.04.2007

- (71) Միքայել Յուրիի Թունյան (AM), Լեւոն Գրիգորի Գրիգորյան (AM), Գայանե Սմբատի Բաբաջանյան (AM), Արթուր Վոլոդյայի Պապիկյան (AM), Կարեն Ադուլֆի Կարակյան (AM)

(72) Միքայել Յուրիի Թունյան (AM), Լեւոն Գրիգորի Գրիգորյան (AM), Գայանե Սմբատի Բաբաջանյան (AM), Արթուր Վոլոդյայի Պապիկյան (AM), Կարեն Ադուլֆի Կարակյան (AM)

- (73) Միքայել Յուրիի Թունյան, 0092, Երեւան, Մոլդովական 90, բն. 9 (AM), Լեւոն Գրիգորի Գրիգորյան, 0099, Երեւան, Շինարարների 15/1, բն. 70 (AM), Գայանե Սմբատի Բաբաջանյան, 0038, Երեւան, Հալաբյան 31, բն. 19 (AM), Արթուր Վոլոդյայի Պապիկյան, 0012, Երեւան, Հր. Քոչարի 24, բն. 29 (AM), Կարեն Ադուլֆի Կարակյան, 0064, Երեւան, Ա. Բաբաջանյան 67, բն. 6 (AM)

(54) Ամբողջական ձուլածո գամ-ներդիր

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ օրթոպեդիկ ստոմատոլոգիային:

Գամ-ներդիրն ունի գամային եւ ներդիրային համառանցք մասեր: Գյուտի համաձայն գամ-ներդիրն ունի իր առանցքին համառանցք երկայնական միջանցիկ անցք:

Ապահովվում է գամ-ներդիրի անխախտելիությունը բուժական միջոցառումների իրականացման ընթացքում, 1 նկ.:

(51) **(2006)** (11) **1998** (13) **A2**
A63B 69/12

(21) AM20070010 (22) 31.01.2007
(42) 02.04.2007

- (71) Հովհաննես Հրահատի Գաբրիելյան (AM)
- (72) Հովհաննես Հրահատի Գաբրիելյան (AM), Իգոր Գրիգորի Սաֆարյան (AM)
- (73) Հովհաննես Հրահատի Գաբրիելյան, 0099, Երեւան, Արզումանյան 17, բն. 3 (AM)

(54) Լողորդի հիդրոդինամիկական բնութագրերի չափման սարք

(57) Գյուտը վերաբերում է մարզական սարքերին, մասնավորապես՝ լող մարզածեւում օգտագործվող փորձարարական եւ ուսուցման մարզասարքերին: Գյուտը կարող է կիրառվել նաեւ թիավարություն մարզածեւում:

Լողորդի հիդրոդինամիկական բնութագրերի չափման սարքն ունի լողվազանի եզրին ամրակցված հարթակ, հարթակի վրա տեղադրված

սնուցման հանգույցով էլեկտրաշարժիչ: Էլեկտրաշարժիչին միացված է փոկային ռեդուկտոր, որին միակցված է թմբուկ, որի վրա փաթաթված է լծակի բազուկին ամրակցված ուժաչափի միջով անցնող չճզվող կապրոնե պարան: Պարանի ծայրը միակցված է լողորդի դաստակներին: Սարքը լրացուցիչ ունի իրար հաջորդաբար միացված տվիչ-գեներատոր, թվային հաշվիչ սարք եւ թվատախտակ, ընդ որում տվիչ-գեներատորի մուտքը միացված է լծակին:

Ընդլայնվում են սարքի ֆունկցիոնալ հնարավորությունները, բարձրացվում է չափումների ճշգրտությունը, 4 նկ.:

- (51) (2006) (11) 1999 (13) A2
B01J 20/281
B01D 15/00
G01N 30/00
 (21) AM20060195 (22) 11.12.2006
 (42) 01.02.2007
 (71) Սերգեյ Սուրենի Յայրապետյան (AM)
 (72) Սերգեյ Յայրապետյան (AM), Լիլիթ Բանյան (AM), Լուսինե Մանգասարյան (AM), Յամբարձում Խաչատրյան (AM)
 (73) Սերգեյ Սուրենի Յայրապետյան, Երեւան, Չեռնիշենսկու 58, բն.1 (AM)
 (54) **Յեղուկային քրոմատագրության համար միաձույլ կրողի ստացման եղանակ**
 (57) Գյուտը վերաբերում է հեղուկային քրոմատագրության համար նյութերի, մասնավորապես՝ միզանյութաֆորմալդեհիդային միաձույլ կրողների, ստացման եղանակներին:

Պատրաստում են միզանյութի 50%-անոց ջրային լուծույթ, ապա դրա pH-ը հասցնում են 2-3 արժեքի, միզանյութի լուծույթի մեջ ներմուծում են ձեւափոխված մակերեւույթով ծակուկեն հանքապոլիմերային սորբենտ, ապա՝ ֆորմալդեհիդի 37%-անոց ջրային լուծույթ, սենյակի ջերմաստիճանում խառնում են մինչեւ համասեռ զանգվածի ստանալը, որից հետո զանգվածը լցնում են քրոմատագրական սյունակի մեջ, ստացված կրողը լվանում թորած ջրով: Որպես սորբենտ օգտագործում են դիատոմիտ, սիլիկաժել, ալյումինի օքսիդ, տիտանի օքսիդ կամ ցիրկոնիումի օքսիդ, իսկ որպես ձեւափոխիչ՝ գամմա-ամինապրոպիլեռեթօքսիսիլան, պոլիվինի-

լային սպիրտ, պոլիվինիլպիրոլիդոն, պոլիէթիլենգլիկոլ, պոլի-2-OH էթիլմեթակրիլատ, պոլիակրիլաթթու, պոլիգլիցիդիլմեթակրիլատ, պոլիստիրոլերկվինիլբենզոլ, պոլիսկտադեցիլմեթակրիլատ-մեթիլմեթակրիլատ կամ պոլիբուտիլակրիլատ-մեթիլմեթակրիլատ: Ինտենսիվացվում է պրոցեսը, ապահովվում է տարբեր ֆունկցիոնալ խմբերով կրողի ստացման հնարավորությունը:

(51) (2006) (11) 2000 (13) A2
B02C 25/00

- (21) AM20060201 (22) 15.12.2006
 (42) 01.02.2007
 (71) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)
 (72) Մարինկա Զաչիկի Բաղդասարյան (AM)
 (73) «Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 105 (AM)
 (54) **Թմբուկային աղացի ավտոմատ կառավարման եղանակ**
 (57) Գյուտը վերաբերում է հանքարդյունաբերությանը, մասնավորապես՝ աղացում հանքաքարի մանրացման գործընթացի ավտոմատ կառավարման եղանակներին եւ կարող է օգտագործվել հանքահարստացման մեջ, քիմիական եւ շինանյութերի արտադրություններում:

Ըստ եղանակի չափում են թմբուկի լցման աստիճանը եւ նյութի ծախսը եւ դրանց համապատասխան նվազեցնում են նյութի ծախսը: Աղացը պատում են սինքրոն շարժիչի միջոցով: Չափում են թմբուկի պտտման արագությունը եւ շարժիչի ներքին անկյունը, որի ածանցյալի գրոյից տարբերվող արժեքի դեպքում կառավարման հանգույցում որոշում են աղացի դիմադրության մոմենտը եւ շարժիչի ասինքրոն մոմենտը: Ստացված արդյունքները փոխանցում են համեմատիչ: Ասինքրոն մոմենտը դիմադրության մոմենտից մեծ լինելու դեպքում համեմատման արդյունքը փոխանցում են հաշվիչ բլոկ, որի միջոցով որոշում են նյութի ծախսի իջեցման այն չափը, որով շարժիչը կայուն մտնում է սինքրոն ռեժիմ: Նյութի ծախսի նվազեցման ազդանշա-

նը փոխանցում են հանքաքարի մատակարարման կարգավորման բլոկ: Մոմենտների համեմատության հակառակ արդյունքի դեպքում շարժիչի արգելակման ազդանշանը փոխանցում են գրանցիչ:

Լրացուցիչ պարամետրեր հաշվի առնելու շնորհիվ բարձրացվում է աղացի ավտոմատ կառավարման արդյունավետությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 2001 (13) A2
B09B 3/00

- (21) AM20060147 (22) 30.08.2006
- (42) 01.02.2007
- (71) Բենիկ Նիկոլայի Հարությունյան (AM), Ռիտա Սուրենի Էմիլյան (AM), Կարինե Վլադիմիրի Մայսուրյան (AM)
- (72) Բենիկ Նիկոլայի Հարությունյան (AM), Ռիտա Սուրենի Էմիլյան (AM), Կարինե Վլադիմիրի Մայսուրյան (AM)
- (73) Բենիկ Նիկոլայի Հարությունյան, 0010, Երեւան, Նալբանդյան 17, բն. 22, Ռիտա Սուրենի Էմիլյան, 0033, Երեւան, Սիամանթոյի 4, բն. 9 (AM), Կարինե Վլադիմիրի Մայսուրյան, 0051, Երեւան, Գրիբոյեդովի 11, բն. 8 (AM)

(54) **Հանքային ջրերի աղանստվածքային թափոնների վերամշակման եղանակ**

(57) Աղանստվածքային թափոնները ենթարկում են մեխանիկական մաքրման, նախնական չորացման՝ 1-2 օր մինչև 60% խոնավության պահպանմամբ, զտման՝ 0.2 մմ տրամագիծ ունեցող մաղերով եւ վերջնական չորացման՝ 5-6 ժամ տեւողությամբ 80°C ջերմաստիճանի պայմաններում: Ստացված չոր զանգվածը մանրացնում են մինչև համասեռ փոշի ստանալը եւ փաթեթավորում 0.5-5.0կգ մոմլաթե պարկերի մեջ:

Ապահովվում է շրջակա միջավայրի պահպանումը հանքային ջրերի աղանստվածքային թափոններով աղտոտումից:

(51) (2006) (11) 2002 (13) A2
B23D 51/00

- (21) AM20070015 (22) 12.02.2007
- (42) 02.04.2007
- (71) Արթուր Հովհաննեսի Չաքարյան (AM)

- (72) Արթուր Հովհաննեսի Չաքարյան (AM)
- (73) Արթուր Հովհաննեսի Չաքարյան, Երեւան. Փ. Բուզանդի փող. 53/55 շենք, բն. 26 (AM)

(54) **Ձեռքի մետաղաղոց**

(57) Մետաղաղոցն ունի աղեղածե շրջանակ, երկոտանի բռնակ, տափուկ, տափուկի ձգման մեխանիզմ եւ հարվածների ու թրթռումների մեղմիչ մեխանիզմ: Բռնակի վերին ոտքը միակցված է շրջանակին հողակապորեն, իսկ բռնակի ստորին ոտքի փորակում տեղավորված է մեղմիչ մեխանիզմը:

Մեղմիչ մեխանիզմը կազմված է պտուտակից, պտուտակի վրա նստած մանեկից եւ առածգական տարրից, որի միջոցով բռնակը փոխազդում է շրջանակի հետ:

Տափուկի ձգման մեխանիզմը տեղակայված է շրջանակի առջեւի ծայրամասում եւ կազմված է նախնական ու վերջնական ձգման հանգույցներից:

Երբ սղոցման ընթացքում տափուկն արգելքի է հանդիպում, օգտագործողի ձեռքի իներցիայի պատճառով բռնակը ճոճվում է հողակապի շուրջը, իսկ առածգական տարրը սեղմվում է՝ մեղմելով հարվածներն ու թրթռումները:

Պաշտպանվում է օգտագործողի ձեռքը հարվածներից, կանխվում է տափուկի վաղաժամ կոտրումը, 3 նկ.:

(51) (2006) (11) 2003 (13) A2
B25B 7/00

- (21) AM20070019 (22) 22.02.2007
- (42) 02.04.2007
- (71) Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM), Պատվական Ռուբենի Հախիսյան (AM)
- (72) Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM), Պատվական Ռուբենի Հախիսյան (AM)
- (73) Կարեն Վոլոդյայի Գասպարյան, Երեւան, Լեփսիուսի 10ա, բն. 18 (AM), Պատվական Ռուբենի Հախիսյան, Երեւան, Մ. Մելիքյան 13, բն. 23 (AM)

(54) **Փակվող սեղմիչ գործիք**

(57) Գյուտը վերաբերում է ձեռքի փակվող սեղմիչ գործիքներին, որոնք ունեն նաեւ սեղմման դիրքում շուրթերի սեւեռակման հնարավորություն: Գործիքն ունի երկարացված տեսքով իրան, որի մի ծայրն իրականացված է որպես

անշարժ բռնալծակ, հողավոր գործող լծակ, որի մի ծայրն իրականացված է որպես շարժուն բռնալծակ, երկու սեղմաշուրթեր, սեղմման-թողման մեխանիզմ, փակող մեխանիզմ եւ իրանի հենակային կետի դիրքի կարգավորման մեխանիզմ: Սեղմման-թողման մեխանիզմն իրականացված է հողավոր քառօղակ մեխանիզմի տեսքով, որի օղակներից մեկը հանդիսանում է առաջին սեղմաշուրթը: Երկրորդ սեղմաշուրթը կինեմատիկորեն կապված է առաջին սեղմաշուրթի հետ: Այդ կինեմատիկ կապը կարող է իրականացվել ատամնավոր կառուցման, հողավոր քառօղակ մեխանիզմի, սահալծակային կամ այլ մեխանիզմի տեսքով:

Սեղմաշուրթերի միջեւ սկզբնական բացվածքի նախնական կարգավորման համար իրանի արտաքին մակերեսային կան սանդղակային բաժանքներ, իսկ սեղմաշուրթի վրա կա նիշ:

Ապահովվում է սեղմվող դետալի դիրքի պահպանումը սեղմման ընթացքում, բարձրանում է օգտագործման հարմարավետությունը, 5 նկ.:

(51) (2006) (11) 2004 (13) A2
B28D 1/02

(21) AM20060158 (22) 18.09.2006
(42) 01.02.2007

(71) Լեւոն Մուրադի Մուրադյան (AM), Մուրադ Լեւոնի Մուրադյան (AM), Մանվել Չախարի Պողոսյան (AM)

(72) Լեւոն Մուրադի Մուրադյան (AM), Մուրադ Լեւոնի Մուրադյան (AM), Մանվել Չախարի Պողոսյան (AM)

(73) Լեւոն Մուրադի Մուրադյան, Երեւան, Ե. Քոչարի 17, բն. 26 (AM), Մուրադ Լեւոնի Մուրադյան, Երեւան, Ե. Քոչարի 17, բն. 26 (AM), Մանվել Չախարի Պողոսյան, Երեւան, Ավան, 7-րդ փող., տուն 57 (AM)

(54) **Ճկուն եւ անվերջ աշխատանքային օրգանով սարք**

(57) Գյուտը վերաբերում է ճկուն եւ անվերջ աշխատանքային օրգանի օգնությամբ տարբեր տիպի պինդ նյութերի արդյունահանմանը եւ կտրման միջոցով մշակմանը, մասնավորապես՝ բնական քարերի արդյունահանմանը եւ մշակմանը:

Ճկուն եւ անվերջ աշխատանքային օրգա-

նով սարքն ունի առնվազն մեկ ճկուն եւ անվերջ աշխատանքային օրգան, ճկուն եւ անվերջ աշխատանքային օրգանի վրա հպումային ճնշում ապահովող փոկային փոխանցումից եւ օղակածեւ ակոս ունեցող ու շարժաբերի հետ կինեմատիկորեն կապված տանող հոլովակից, ընդ որում ճկուն եւ անվերջ աշխատանքային օրգանը շարժական տեղադրված է տանող հոլովակի օղակածեւ ակոսի մեջ, օղակածեւ ակոս ունեցող նվազագույնը մեկ տարվող հոլովակ եւ սարքի իրան: Սարքն ունի օղակածեւ ակոսներով առնվազն մեկ գույգ ուղղորդիչ հոլովակներ: Ճկուն եւ անվերջ աշխատանքային օրգանը սեղմված է տանող հոլովակի օղակածեւ ակոսին փոկային փոխանցման փոկի միջոցով, իսկ ճկուն եւ անվերջ աշխատանքային օրգանի ճյուղերը, անցնելով տարվող հոլովակի օղակածեւ ակոսի միջով եւ պահվելով տրամագծորեն հակառակ տեղադրված ուղղորդիչ հոլովակներով, տանող հոլովակի տրամագծորեն հակառակ կողմում կազմում են կախված բաց օղակ:

Մեծացվում է աշխատանքային օրգանի երկարակեցությունը, կրճատվում է կտրման գործընթացի էներգատարությունը, 4 նկ.:

(51) (2006) (11) 2005 (13) A2
B28D 1/02

(21) AM20070009 (22) 30.01.2007
(42) 01.03.2007

(71) Հրայր Վահրամի Դարբինյան (AM), Վահրամ Հրայրի Դարբինյան (AM)

(72) Հրայր Վահրամի Դարբինյան (AM), Վահրամ Հրայրի Դարբինյան (AM)

(73) Հրայր Վահրամի Դարբինյան, Երեւան, Աբովյան 22ա, բն. 66 (AM), Վահրամ Հրայրի Դարբինյան, Երեւան, Աբովյան 22ա, բն. 66 (AM)

(54) **Քարահատ հաստոց**

(57) Գյուտը վերաբերում է քարի մշակմանը, մասնավորապես՝ փակ միջավայրում սկավառակային սղոցով քարի հատման հաստոցներին:

Հաստոցն ունի իրան, յուղող-հովացնող հեղուկով գուռ, ալմաստե սկավառակով իլ, քարի տեղակայման հանգույց, հորիզոնական ուղղորդիչների վրա տեղաշարժվող քարի երկայնական մատուցման մեխանիզմ եւ իլի պտտման ու քարի երկայնական մատուցման մեխանիզմի շար-

ժաբերներ: Քարի երկայնական մատուցման մեխանիզմի ուղղորդիչները կոշտ ամրակցված են իրանի՝ իլի հակադիր, հանովի եւ կարգավորվող պատի արտաքին կողմում: Քարի տեղակայման հանգույցը ուղղորդիչների հետ կապված է հոլովակավոր սայլակի միջոցով եւ հորիզոնական առանցքի շուրջը պտտման եւ առանցքային լայնական մատուցման հնարավորությամբ տեղակայված է հորիզոնական սռնու վրա: Այդ հանգույցի վրա նստեցված է գուռին հպվող թիթեղ, որի երկու կողմերին կցված են քիվից կախված՝ գուռի պատի երկայնական պատուհանը ծածկող վարագույրներ:

Նվազեցվում է շփվող մակերեսայինների մաշվածքը, դյուրինացվում է քարի մատուցումն ու հաստոցի սպասարկումը, 4 նկ.:

(51) (2006) (11) 2006 (13) A2
B62D 41/00

(21) AM20060171 (22) 25.10.2006
(42) 01.02.2007

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ռազմիկ Մակարի Բալայան (AM), Արման Ռոբերտի Սիմոնյան (AM), Նորիկ Սարիբեկի Սարգսյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) **Ճանապարհատրանսպորտային պատահարների պարամետրերի որոշման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է տրանսպորտային միջոցների ճանապարհատրանսպորտային պատահարների փորձագիտական հետազոտման բնագավառին, մասնավորապես՝ հետիոտնին ավտոմոբիլով վրաերթի ենթարկելու վերլուծմանը:

Ըստ եղանակի որոշում են ժամանակին վթարային արգելակումով վրաերթը կանխելու հնարավորությունը հաճախակի հանդիպող արագությունների համար: Հաշվի են առնում ճանապարհի ծածկույթի տեսակը՝ դրա վիճակը, երկայնական թեքությունը, ավտոմոբիլի կառուցվածքային առանձնահատկությունները եւ շահագործ-

ման ընթացքում արգելակային համակարգի ու դողերի մաշվածքը: Հստակորեն գնահատում են ավտոմոբիլի երթելեկելի գոտին հետիոտնի անվտանգ անցնելու եւ խուսավարումով այն անվտանգ շրջանցելու պայմանները:

Կրճատվում է ճանապարհատրանսպորտային պատահարների վերլուծման ժամանակը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2007 (13) A2
C03C 3/00
C03C 4/00

(21) AM20060181 (22) 13.11.2006
(42) 03.01.2007

(71) «Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Լուսինե Ալբերտի Գասպարյան (AM), Սոնա Գարեգինի Մուրադյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM), Կոստան Արտավազի Կոստանյան (AM)

(73) «Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) **Ապակի**

(57) Գյուտը վերաբերում է բարձր կատիոն-անիոնային հաղորդականությամբ ապակիների բաղադրանյութերին եւ կարող է օգտագործվել էլեկտրատեխնիկական, օպտոէլեկտրոնային սարքերում, էլեկտրաքիմիական մարտկոցներում եւ տվիչներում:

Ապակին ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%. PbO՝ 65.0-74.0, B₂O₃՝ 19.5-25.0, LiF՝ 2.0-7.0, Al₂O₃՝ 0.5-2.0, PbF₂՝ 1.0-7.0:

Բարձրացվում է ապակու կայունությունը բյուրեղացման եւ քիմիական ազդանյութերի նկատմամբ:

(51) (2006) (11) 2008 (13) A2
C07D 307/00

(21) AM20060173 (22) 30.10.2006
(42) 01.12.2006

(71) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն

(AM), «ՀՀ ԳԱԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Աիդա Ավետիսի Ավետիսյան (AM), Գայանե Գեւորգի Թոքմաշյան (AM), Լուսինե Վլադիմիրի Կարապետյան (AM), Ռիմա Վարդգեսի Պարոնիկյան (AM), Յրաչյա Մովսեսի Ստեփանյան (AM), Բագրատ Տիրանի Ղարիբջանյան (AM)

(73) «Երեւանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Ալեք Մանուկյան 1 (AM), «ՀՀ ԳԱԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Ազատության պող. 26 (AM)

(54) Հակամանրեային ակտիվություն ունեցող 3-օքսիմեթիլ-4,4-երկմեթիլ-2-բուտեն-4-օլիդի ածանցյալներ

(57) 3-օքսիմեթիլ-4,4-երկմեթիլ-2-բուտեն-4-օլիդի ածանցյալները ունեն հակամանրեային ակտիվություն եւ կարող են կիրառվել դեղագործական պատրաստուկների արտադրության մեջ:

2-էթօքսիկարբոնիլ-3-բրոմմեթիլ-4,4-երկմեթիլ-2-բուտեն-4-օլիդը ենթարկում են ջրային կամ աղաթթվային հիդրոլիզի, ապա ցածր ճնշման պայմաններում հեռացնում են ջրի ավելցուկը եւ ստանում համապատասխանաբար 2-էթօքսիկարբոնիլ-3-օքսիմեթիլ-4,4-երկմեթիլ-2-բուտեն-4-օլիդը կամ 2-կարբօքսի-3-օքսիմեթիլ-4,4-երկմեթիլ-2-բուտեն-4-օլիդը:

Ապահովվում է միացությունների հակամանրեային ակտիվության լայն սպեկտր:

(51) (2006) (11) 2009 (13) A2
C12G 3/00

(21) AM20060207 (22) 25.12.2006

(42) 01.03.2007

(71) Գեւորգ Կամիսարի Հայրապետյան (AM), Հայկ Գեւորգի Հայրապետյան (AM), Արթուր Գեւորգի Հայրապետյան (AM)

(72) Գեւորգ Կամիսարի Հայրապետյան (AM), Հայկ Գեւորգի Հայրապետյան (AM), Արթուր Գեւորգի Հայրապետյան (AM)

(73) Գեւորգ Կամիսարի Հայրապետյան, 0052, Երեւան, Չաքարիա Սարկավազի փող. 2-րդ նրբ.1 (AM), Հայկ Գեւորգի Հայրապետյան, 0052, Երեւան, Չաքարիա Սարկավազի փող.

2-րդ նրբ.1 (AM), Արթուր Գեւորգի Հայրապետյան, Երեւան, Չաքարիա Սարկավազի փող. 2-րդ նրբ.1 (AM)

(54) Կոնյակի սպիրտի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ սպիրտների ստացման եղանակներին:

Կոնյակի 55-65%-անոց երիտասարդ սպիրտը թորում են 40-50°C ջերմաստիճանում, ապա գոլորշիները խտացնում են, խտանյութը անց են կացնում մինչեւ 3 մմ հաստությամբ կաղնու տաշեղներով լցված խցիկի միջով, որից հետո կաղնու բաղադրամասերով հարստացված սպիրտը ուղարկում են հնացման: Սպիրտի թորման եւ խցիկով անցկացման պրոցեսները կատարում են 8-10 անգամ:

Ապահովվում է կոնյակի սպիրտի որակի բարձրացում կաղնեփայտի բաղադրամասերի ավելի լիակատար լուծահանման շնորհիվ:

(51) (2006) (11) 2010 (13) A2
E02D 3/00

(21) AM20060193 (22) 06.12.2006

(42) 03.01.2007

(71) Ռուբեն Նիկոլայի Հարությունյան (AM)

(72) Ռուբեն Նիկոլայի Հարությունյան (AM)

(73) Ռուբեն Նիկոլայի Հարությունյան, 0101, Երեւան, Նարեկացու 38, բն.54 (AM)

(54) Բազմահարկ շենքի կողաթեքության նվազեցման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին եւ կարող է օգտագործվել բազմահարկ շենքերի հիմնատակի ջրանկայուն գրունտների գերնորմատիվային անհավասարաչափ նստվածքների պատճառով առաջացած կողաթեքության նվազեցման համար:

Ըստ եղանակի կատարում են հիմքի ուժեղացում՝ մեծացնելով հենման մակերեսը: Խաչաժապավենային հիմքի վանդակներում ներբանի տակ տեղադրում են միաձուլյ հիմքային սալեր եւ իրականացնում են հիմնատակի ապախտացված գրունտների ներարկումային ամրապնդում: Հիմքային սալերը խաչաժապավենային հիմքերի վանդակներում տեղադրում են ժապավենային հիմքի առաջին աստիճանի վրա եւ ամրակցում են հիմքի առաջին եւ երկրորդ աստի-

ճանների հետ՝ վերածելով խաչաժապավենա-
յին հիմքը երկկողմանի կողասալայինի: Հիմնա-
տակի ապախտացված գրունտների ներարկու-
մային ամրապնդումն իրականացնում են երկու
փուլով՝ սկզբում շենքի հիմնատակի գրունտնե-
րի այն մասում, որտեղ ստովածքներն առավե-
լագույնն են, այնուհետև, շենքը ուղղաձիգ դիր-
քի հասնելուց հետո՝ նվազագույն ստովածք ու-
նեցող կետում:

Կանխվում է բարձրահարկ շենքերի հիմնա-
տակի գրունտների անհավասարաչափ ստու-
վածքը, 5 նկ.:

(51) (2006) (11) 2011 (13) A2
E04H 9/02
E04B 1/19

(21) AM20060213 (22) 29.12.2006
(42) 01.02.2007

(71) «ՎՊԷԿՏԻ» ՓԲԸ (AM)

(72) Ալեքսանդր Սահակյան (AM), Ռուբեն Սա-
հակյան (AM)

(73) «ՎՊԷԿՏԻ» ՓԲԸ, 0051, Երեւան, Մամիկոն-
յանց 48 (AM)

(54) **Բազմահարկ շենքի համակցված կոնստ-
րուկտիվ համակարգ**

(57) Գյուտը վերաբերում է բարձր սեյսմակայու-
նություն ունեցող բազմահարկ շենքերի կոնստ-
րուկտիվ համակարգերին:

Համակարգն ունի կենտրոնական դիրք զբա-
ղեցնող սյունավոր ծավալատարածական ուղ-
ղաձիգ կրող կառուցատարր, կոշտության տար-
րեր, որոնք շաղկապում են սյուները եւ գոյաց-
նում կրող կառուցատարրի խորշեր, հողավոր
հիմնակմախք, որի սյուները շրջապատում են
կրող կառուցատարրը, եւ հարկով միակտոր
ծածկի սալեր: Կրող կառուցատարրը կազմված
է լայնական հատվածքում փակ եզրագիծ ունե-
ցող, իրար հարող խորշերի համախմբությու-
նից, որոնք գոյացնում են բջջավոր տուփային
կառուցվածք:

Խորշերը ձեւավորված են կառուցվածքի ամ-
բողջ բարձրությամբ միասնական սյուներով,
որոնք խաչաձեւ հատվածքի պողպատյա կա-
ռուցվածքներ են, կոշտության ուղղաձիգ մի-
ասնական տարրերով, որոնք շաղկապում են
յուրաքանչյուր երկու հարակից խաչաձեւ կա-

ռուցվածքները, եւ հարկի միակտոր ծածկի սա-
լերով:

Ճառագայթային եզրածեւ ունեցող շենքե-
րում կրող կառուցատարրը սեկցիավոր է եւ
կազմված է կենտրոնական բջջավոր սեկցիա-
յից ու դրան հարող ճառագայթային բջջավոր
սեկցիաներից, որոնք թիվը համապատասխա-
նում է շենքի թեւերի թվին:

Բարձրացվում է համակարգի կրողունակու-
թյունը 9 բալանոց սեյսմիկության պայմաննե-
րում, 6 նկ.:

(51) (2006) (11) 2012 (13) A2
E06B 3/32

(21) AM20060118 (22) 19.07.2006

(42) 01.11.2006

(71) Ռոբերտ Վահանի Իսաջանյան (AM), Վա-
հան Ռոբերտի Իսաջանյան (AM), Արշակ Ռոբեր-
տի Իսաջանյան (AM)

(72) Ռոբերտ Վահանի Իսաջանյան (AM), Վա-
հան Ռոբերտի Իսաջանյան (AM), Արշակ Ռոբեր-
տի Իսաջանյան (AM)

(73) Ռոբերտ Վահանի Իսաջանյան, 0028, Երեւ-
ան, Բարբյուսի 33 (AM), Վահան Ռոբերտի Իսա-
ջանյան, 0028, Երեւան, Բարբյուսի 33 (AM), Ար-
շակ Ռոբերտի Իսաջանյան, 0028, Երեւան, Բարբ-
յուսի 33 (AM)

(54) **Բարձրացվող դարպաս**

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը,
մասնավորապես՝ բարձրացվող դարպասների
կոնստրուկցիաներին:

Դարպասն ունի անշարժ շրջանակ, որի մեջ
տեղակայված է երկու մեխանիզմով հորիզո-
նական առանցքի շուրջը պտտվող փեղկ: Մե-
խանիզմներից յուրաքանչյուրն ունի կառավար-
ման հանգույց, շարժական կանգնակ եւ շրջա-
նակին ամրակցված անշարժ կանգնակ, որոնք
հողակապորեն միակցված են առանցքակալի
միջոցով, սեղմման զսպանակ պարունակող հա-
վասարակշռիչ մեխանիզմ, որի մի ծայրը հողա-
կապի միջոցով միակցված է շարժական կանգ-
նակին, իսկ մյուսը՝ շրջանակին: Փեղկը պտտ-
վում է հորիզոնական առանցքի շուրջը: Պտտ-
ման առանցքի հեռավորությունը փեղկի եզրից
ոչ ավելին է, քան փեղկի բարձրության քառոր-
դը: Կառավարման հանգույցը հողակապորեն

ամրակցված է շարժական կանգնակին եւ ունի շարժաբեր ու բռնակ:

Պարզեցվում է կառուցվածքը, բարձրացվում է աշխատանքի հուսալիությունը, 4 նկ.:

(51) (2006) (11) 2013 (13) A2
E21C 41/26

(21) AM20060204 (22) 21.12.2006

(42) 01.03.2007

(71) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ (AM)

(72) Լեւոն Մանուկյան (AM), Սահակ Արզումանյան (AM), Մաքսիմ Հակոբյան (AM)

(73) «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ, 0010, Երեւան, Խանջյան 19 (AM)

(54) **Օգտակար հանածոների հանքավայրերի բաց մշակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է լեռնային արդյունաբերությանը եւ կարող է օգտագործվել լեռնատեխնիկական բարդ պայմաններում, մասնավորապես՝ տեկտոնական խզվածքի առկայության պայմաններում օգտակար հանածոների հանքավայրերի բաց եղանակով մշակման ժամանակ:

Հանքամարմնի հանույթն իրականացնում են հանքաստիճաններով, տեղափոխում են լեռնային զանգվածը բացահանքի աշխատանքային հարթակներով եւ գրավիտացիոն թողանցում են այն հարթակների եզրերում առկա հավաքող ու դրանք միմյանց միացնող մայրուղային հանքաթեքատով մինչեւ լեռնազանգվածի կուտակարան, մասնավորապես՝ հանքիջանցք: Լեռնատեխնիկական բարդ պայմաններում գտնվող բացահանքի աշխատանքային կողի բարձրությամբ թողնում են V-աձեւ եզրագծով բնազանգված-հենապատ, իսկ մայրուղային հանքաթեքատները եւ հանքիջանցքը տեղակայում են համապատասխանաբար բնազանգված-հենապատի կողերում եւ նեղ հիմքի մոտ:

Ապահովվում է բացահանքի շահագործման անվտանգությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2014 (13) A2
F02B 9/00

(21) AM20060214 (22) 29.12.2006

(42) 02.04.2007

(71) Արտաշես Մովսիսյան (AM), Անդրանիկ Մովսեսյան (AM)

(72) Արտաշես Մովսիսյան (AM), Անդրանիկ Մովսեսյան (AM)

(73) Արտաշես Մովսիսյան, Երեւան, Սարմենի 70 (AM), Անդրանիկ Մովսեսյան, Երեւան, Սարմենի 70 (AM)

(54) **Ներքին այրման շարժիչ**

(57) Գյուտը վերաբերում է բենզինով կամ գազային վառելանյութով աշխատող ներքին այրման շարժիչներին:

Ներքին այրման շարժիչն ունի վառելանյութի եւ այրվող խառնուրդի մատակարարման համակարգեր, այրման արգասիքների հեռացման համակարգ, այրման խցիկ եւ ելքային լիսեռի հետ կապված գլանամիացային համակարգ: Այրման խցիկն իրականացված է առանձին խցիկի տեսքով, որի մուտքերը միացված են վառելանյութի եւ օդի մատակարարման համապատասխան համակարգերին, իսկ ելքն օդաճշական մղակի միջոցով միացված է գլանի մուտքին: Գլանն իրականացված է փակ խցի ձեւով, իսկ միացը կատարված է հարթ սալի ձեւով, ընդ որում միացը բաժանում է գլանի խուցն օդաճշական եւ հիդրավիկական խցիկների: Հիդրավիկական խցիկը յուղի մղակի եւ յուղի ծորակի միջոցով միացած է հիդրոշարժիչի մուտքին, իսկ հիդրոշարժիչի լիսեռը ներքին այրման շարժիչի ելքային լիսեռն է:

Բարձրացվում է շարժիչի օ.գ.գ.-ն, պարզեցվում է տրանսպորտային միջոցի կառուցվածքը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2015 (13) A2
F02M 21/00

(21) AM20060172 (22) 25.10.2006

(42) 03.01.2007

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Ռազմիկ Մակարի Բալայան (AM), Արման Ռոբերտի Սիմոնյան (AM), Նորիկ Սարիբեկի Սարգսյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Ներքին այրման շարժիչ գազի մատուցման կարգավորման սարք

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը: Ներքին այրման շարժիչ գազի մատուցման կարգավորման սարքն ունի դրոսելային փականով կարբյուրատոր-խառնիչ, կարբյուրատոր-խառնիչին ու միմյանց գազի մատուցման խողովակներով միակցված երկաստիճան գազային ռեդուկտոր-գոլորշիչ եւ մխոցավոր փական: Մխոցավոր փականը կինեմատիկական փոխանցման մեխանիզմի միջոցով համագործակցում է կարբյուրատոր-խառնիչի դրոսելային փականի հետ, ընդ որում մխոցավոր փականը գազի մատուցման խողովակով կարբյուրատոր-խառնիչին միակցված է դրոսելային փականից վերեւ:

Բարելավվում են ավտոմեքենայի դիսամիկական հատկանիշները, 1 նկ.:

**(51) (2006) (11) 2016 (13) A2
F02M 21/02**

(21) AM20060170 (22) 25.10.2006
(42) 01.02.2007

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)

(72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Ռագմիկ Մակարի Բալայան (AM), Արման Ռոբերտի Սիմոնյան (AM), Նորիկ Սարիբեկի Սարգսյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) Ներքին այրման գազային շարժիչ գազի մատուցման սարք

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը: Ներքին այրման գազային շարժիչ գազի մատուցման սարքն ունի կարբյուրատոր-խառնիչին միակցված երկաստիճան գազային ռեդուկտոր-գոլորշիչ եւ նրա իրանի մեջ տեղակայված թաղանթազսպանակային բեռնաթափիչ սարք իր կենտրոնական ձողով: Ռեդուկտոր-գոլորշիչի իրանին, նրա ստորին մասում ամրակցված է էլեկտրամագնիսական հրիչ-փական, որի կոճի գալարների ծայրերը միացված են հոսանքի աղբյուրին ժամանակի ռելեի

միջոցով: Էլեկտրամագնիսական հրիչ-փականի միջուկի հրիչ-խարիսխը համագործակցելու հնարավորություն ունի թաղանթազսպանակային բեռնաթափիչ սարքի ձողի հետ եւ համառանցք է դրան:

Ցածրաշերմաստիճան պայմաններում ապահովվում է շարժիչի արագ գործարկումը, մեծացվում են շարժիչի երկարակեցությունը եւ կուտակչային մարտկոցի ծառայության ժամկետը, 1 նկ.:

**(51) (2006) (11) 2017 (13) A2
F03D 5/00**

(21) AM20060164 (22) 02.10.2006
(42) 01.02.2007

(71) Երվանդ Սեֆերյան (AM), Հրանտ Սեֆերյան (AM)

(72) Երվանդ Սեֆերյան (AM), Հրանտ Սեֆերյան (AM)

(73) Երվանդ Սեֆերյան, Երեւան, Ֆրունզեի 18, բն.59 (AM), Հրանտ Սեֆերյան, Երեւան, Ֆրունզեի 18, բն.59 (AM)

(54) Հողմաէներգետիկական կայանք

(57) Գյուտը վերաբերում է հողմաէներգետիկային:

Հողմաէներգետիկական կայանքն ունի ուղղաձիգ լիսեռ եւ դրա շուրջ շառավղայնորեն տեղակայված կորածեւ թիակներ: Թիակների ստորին մասում՝ օղակածեւ ուղղորդիչների վրայով պտտվելու հնարավորությամբ ամրակցված են հոլովակներ: Կայանքի ստորին մասում տեղակայված է ուղղաձիգ լիսեռին միակցված գեներատոր: Կորածեւ թիակների ծայրամասերը երկարացված են մինչեւ միջթիակային առավելագույն բացվածքը: Թիակները հորիզոնական ուղղությամբ մեջտեղից երկփեղկված են եւ իրենց մեկ ծայրամասով ամրակցված են ուղղաձիգ լիսեռը ընդգրկող եւ նրան կոշտ միակցված շեղանկյունաձեւ միջուկին: Թիակների մյուս ծայրամասերը ճաղերով միակցված են ուղղաձիգ լիսեռին, ընդ որում լիսեռին միակցված ճաղերի ծայրամասերը ավելի ցածր են, քան թիակին միակցված ծայրամասերը, իսկ ճաղերի վրա ազատ տեղաշարժվելու հնարավորությամբ տեղակայված են կենտրոնախույս ծանրուկներ:

Պարզեցվում է կառուցվածքը, 8 նկ.:

(51) (2006) (11) 2018 (13) A2
F03D 5/00

(21) AM20070006 (22) 22.01.2007
(42) 02.04.2007

(71) Երվանդ Սեֆերյան (AM), Յրանտ Սեֆերյան (AM)
(72) Երվանդ Սեֆերյան (AM), Յրանտ Սեֆերյան (AM)
(73) Երվանդ Սեֆերյան, Երեւան, Ֆրունզեի 18, բն.59 (AM), Յրանտ Սեֆերյան, Երեւան, Ֆրունզեի 18, բն.59 (AM)

(54) Ինքնակառավարվող իներցիոն համակարգ

(57) Գյուտը վերաբերում է հողմաէներգետիկայի բնագավառին, մասնավորապես՝ հողմաշարժիչներում օգտագործվող իներցիոն համակարգերին:

Ինքնակառավարվող իներցիոն համակարգն ունի ուղղաձիգ լիսեռ եւ դրան ամրակցված հողմային էներգիայի կերպափոխիչ: Կերպափոխիչի ստորին մասում ամրակցված են սայլակներ, որոնք հնարավորություն ունեն պտտվելու օղակաձեւ ուղղորդիչի վրայով: Ուղղաձիգ լիսեռին միակցված են դրա շուրջը շառավղայնորեն տեղակայված ճաղեր, ընդ որում լիսեռին միակցված ճաղերի ծայրերը ավելի ցածր են, քան մյուս ծայրերը: Ճաղերի վրա ազատ տեղաշարժվելու հնարավորությամբ տեղակայված են կենտրոնախույս ծանրուկներ: Կերպափոխիչը միակցված է ուղղաձիգ լիսեռի շուրջն ազատ պտտվող թմբուկին: Ճաղերի ազատ ծայրերը հենված են լրացուցիչ սայլակների վրա, որոնք հնարավորություն ունեն պտտվելու լրացուցիչ, ներքին օղակաձեւ ուղղորդիչի վրայով: Լրացուցիչ սայլակի վրա տեղակայված է ինքնակառավարվող իներցիոն համակարգին կերպափոխիչը շրջանցելու հնարավորություն տվող մղլակ:

Մեծացվում է հզորությունը, կարգավորվում է անկյունային արագությունը, 3 նկ.:

(51) (2006) (11) 2019 (13) A2
F16F 7/00

(21) AM20060186 (22) 24.11.2006
(42) 01.02.2007

(71) Արման Յովհաննիսյան (AM)
(72) Արման Յովհաննիսյան (AM)
(73) Արման Յովհաննիսյան, Երեւան, Գրիգոր Լուսավորչի 12, բն. 2ա (AM)

(54) Մեղմիչ

(57) Մեղմիչն ունի ստորին եւ թանձր հեղուկով լցված սնամեջ վերին հանգույցներ: Սեղմման շարժի ժամանակ ստորին հանգույցը մտնում է վերին հանգույցի մեջ: Սնամեջ վերին հանգույցը սնամեջ գլան է, որի վերին հիմքը փակ է, իսկ ստորին կենտրոնում արված է անցք, ընդ որում ստորին հիմքի ներքին մակերեսային ծայրամասին ամրակցված է օղակաձեւ հենակ: Ստորին հանգույցը կազմված է հենաձողից, նրա վերին մակերեսային կենտրոնում ուղղաձիգ ամրակցված եւ վերին բարակացված հատվածամաս ունեցող ձողից, ձողի վերին ծայրամասին կոշտ ամրակցված սկավառակից եւ ձողի վերին բարակացված հատվածամասում ուղղաձիգ տեղաշարժի հնարավորությամբ տեղակայված շարժուն տափօղակից: Սկավառակի միջևամասում շրջանաձեւ արված են մեծ, իսկ ծայրամասերում՝ փոքր անցքեր: Մեծ անցքերի արտագծյալ շրջանազծի շառավիղը փոքր է շարժուն տափօղակի շառավղից, իսկ փոքր անցքերի արտագծյալ շրջանազծի շառավիղը մեծ է տափօղակի շառավղից առնվազն փոքր անցքի տրամագծի չափով: Ձողի շուրջը տեղակայված է հենաձողին ամրակցված սեղմման զսպանակ, իսկ ձողի մեծ տրամագիծը համաչափ է վերին հանգույցի ստորին հիմքի կենտրոնում արված անցքի տրամագծին:

Պարզեցվում է կառուցվածքը, 9 նկ.:

(51) (2006) (11) 2020 (13) A2
F16L 55/00

(21) AM20060191 (22) 06.12.2006
(42) 01.03.2007

(71) Էդուարդ Պետրոսի Աշխյանց (AM)
(72) Էդուարդ Պետրոսի Աշխյանց (AM)
(73) Էդուարդ Պետրոսի Աշխյանց, Երեւան, Սայաթ-Նովայի 37, բն. 42 (AM)

(54) Հիդրավլիկական հարվածի մարիչ

(57) Գյուտը վերաբերում է ճնշումային խողովակաշարերի ամրաններին:

Հիդրավլիկական հարվածի մարիչը տեղակայված է հակադարձ կափույրով մղման խողովակաշարի վրա եւ իրականացված է հակադարձ կափույրից հետո տեղակայված արտաթողման ուղղաձիգ կարճախողովակի, դրա ելքի

վրա ամրակցված կարգավորվող փակիչ օրգանի եւ փակիչ օրգանից հետո ամրակցված ջրթողման խողովակի տեսքով: Փակիչ օրգանն իրականացված է կարգավորվող փակումով դարձովի հակադարձ կափույրի տեսքով, որի ափսեից վերել՝ ջրթողման խողովակում կա հեղուկի սյուն: Կարգավորվող փակումով դարձովի հակադարձ կափույրի հիդրոզլան-տատանամեղմիչի միացրը գապանակած է: Միացից վերել եւ ներքել գտնվող խոռոչները միակցող յուղի արտահոսման գծի վրա տեղադրված է հակադարձ կափույր, որի ափսեի վրա կա անցք:

Պարզեցվում է կառուցվածքը, բարձրացվում է աշխատանքի հուսալիությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2021 (13) A2
G01N 21/00

(21) AM20060210 (22) 27.12.2006
(42) 01.03.2007

(71) Արմեն Եգորի Չաքարյան (AM), Գայանե Յմայակի Պողոսյան (AM), Միքայել Յուրիի Թունյան (AM)

(72) Արմեն Եգորի Չաքարյան (AM), Գայանե Յմայակի Պողոսյան (AM), Միքայել Յուրիի Թունյան (AM)

(73) Արմեն Եգորի Չաքարյան, 0078, Երեւան, Մարգարյան փող. 2-րդ նրբ. 1, բն. 46 (AM), Գայանե Յմայակի Պողոսյան, 0012, Երեւան, Կոմիտասի 9/1, բն.37 (AM), Միքայել Յուրիի Թունյան, 0092, Երեւան, Սուլդովական 2/2, բն.9 (AM)

(54) **Բազիսային ակրիլային պլաստմասսաներում մնացորդային ազատ ռադիկալային ակտիվության գնահատման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է նյութերի վերլուծությանը, մասնավորապես՝ քիմլյումինեսցենտային անալիզի մեթոդով բազիսային ակրիլային պլաստմասսաներում մնացորդային ազատ ռադիկալային ակտիվության գնահատման եղանակներին եւ կարող է կիրառվել ստոմատոլոգիայում:

Պարբերաբար 70 օրվա ընթացքում գրանցում են բազիսային ակրիլային պլաստմասսաներում պոլիմերման պրոցեսում առաջացող մոնոմերի ազատ ռադիկալներով արձակվող լուսային քվանտերի թիվը, ըստ ազդեցության ինտենսիվության դատում են ռադիկալների մնացորդային ակտիվության մասին:

Բարձրացվում է չափման ճշգրտությունը եւ ստացված տեղեկությունների հավաստիությունը:

(51) (2006) (11) 2022 (13) A2
G01S 7/03
G01S 7/40
H01Q 3/26
H01Q 21/00

(21) AM20060208 (22) 25.12.2006
(42) 01.03.2007

(71) «ԵՐԵՎԱՆԻ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ (AM)

(72) Միեր Վարդգեսի Մարկոսյան (AM), Սուրեն Գեւորգի Էյրամջյան (AM), Արշակ Անդրանիկի Յովհաննիսյան (AM), Վահան Յենրիկի Ավետիսյան (AM)

(73) «ԵՐԵՎԱՆԻ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ, 0015 Երեւան, Ջորափի 26

(54) **Ակտիվ փուլավորված անտենային ցանցի ընդունահաղորդող մոդուլների տեստավորման սարք**

(57) Գյուտը վերաբերում է անտենային տեխնիկային:

Սարքում օգտագործված է գծային բեւեռացման շարժական չափող անտենա՝ կիսալիքային կամ միամող ուղղանկյուն ալիքատարի բաց վերջավորության տեսքով: Մոդուլի բջջի տեստավորման ընթացքում չափող անտենան տեղադրված է բջջի ճառագայթիչի առջեւ հեռավոր գոտում: Անհրաժեշտ տրամաչափված ազդանշանների ապահովման համար սարքը պարունակում է անշարժ տրամաչափող եւ հանովի համառանցք ալիքատարային անցումներ: Չափող անտենայի տեղադրումը որոշակի կողմնորոշմամբ մոդուլի տեստավորվող բջջի ճառագայթի կամ անշարժ տրամաչափող համառանցք ալիքատարային անցումների առջեւ իրականացվում է չափող անտենայի 90 աստիճանով պտտման եւ նրա գծային տեղափոխության շարժաբերներով: Երկու շարժաբերներն էլ ավտոմատ կերպով կառավարվում են համակարգչով:

Բարձրացվում է ընդունահաղորդող մոդուլների անտեստավորելիության աստիճանը, 2 նկ.:

- (51) **(2006)** (11) **2023** (13) **A2**
H01M 2/16
B01D 71/00
 (21) AM20070014 (22) 09.02.2007
 (42) 01.03.2007
 (71) «ՅԱՇ ԵՐԿՈՒ ԷԿՈՆՈՄԻ» Փակ բաժնետիրական ընկերություն (AM)
 (72) Յակոբ Յովհաննեսի Սարգսյան (AM), Գագիկ Գուրգենի Զարամյան (AM), Արման Ստեփանի Դանելյան (AM), Աղասի Ռաֆիկի Մանուկյան (AM), Վահե Բորիսի Օդաբաշյան (AM), Ռաման Արամի Մնացականյան (AM)
 (73) «ՅԱՇ ԵՐԿՈՒ ԷԿՈՆՈՄԻ» Փակ բաժնետիրական ընկերություն (AM)
(54) Բաղադրանյութային պրոտոնափոխանակման թաղանթի պատրաստման եղանակ
 (57) Գյուտը վերաբերում է կատիոնափոխանակման թաղանթների պատրաստման եղանակներին եւ կարող է կիրառվել էլեկտրաքիմիական

